

ՍՍՀԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՍՍՌՄ ԳԻՏՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՎԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԻ ԱՅՑԸ ԷՋՄԻԱՍԻՆ

Հոկտեմբերի 29-ին, Մայր Աթոռ ժամանեցին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի դիտական սեփական մասնակցող մի խումբ համամիովենական ակադեմիկոսներ, իրենց ուղեկիցներով:

Վեհաբանի դարպասի մոտ հյուրերին դիմավորեցին Գեր. Տ. Վահան Արքեպիսկոպոսը և ավագ լուսարար Տ. Սահակ Ծ. Վարդապետը: Հյուրերը նախ այցելեցին Տաճար և թանգարան, ուր Տաճարի կառուցման և պատմական այլ հարցերի մասին տրվեցին մանրամասն բացատրություններ: Այնուհետև հյուրերը այցելեցին Վեհարան և արժանացան Վեհափառ Հայրապետի ունկնդրության: Վեհափառ Հայրապետը ողջունեց նրանց գալուստը Սովետական Հայաստան, մաղթելով հաջողություն իրենց գիտական աշխատանքների մեջ: Վեհափառը խոսեց հարեբեն լեզվով, որն անմիջապես թարգմանեց ուսանողներն Գերագույն Հոգևոր Խորհրդի քարտուղար Հ. Ազոպյանը: Ստորև տալիս ենք Վեհափառ Հայրապետի ճառը, որը սրբագրել ենք մենք:

«Ուրախ եմ, որ այսօր Հայրապետական հարկի տակ ընդունելու հաճույքն ունիմ Խորհրդային Միության այլևայլ մարզերից՝ Ռուսաստանի, Վրաստանի և Ադրբեջանի զանազան վայրերից պատմական գիտությունաց սեփական մասնակցելու համար Հայաստան, եկած ակադեմիկոսներին: Ի սրտե ողջունում եմ Ձեր գալուստը մեր Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, որի նպատակն էր գիտել մեր Հայրենիքի պատմական հուշարձանները, ուսումնասիրել մեր անցյալ և ներկա կուլտուրան, վեր հանել նոցա արժանիքները և տալ նոցա զնահատականը:

Հայ ժողովուրդը ի սկզբանե անտի սիրել է կուլտուրա, ստեղծել է անցյալում իր ազգային մշակույթը՝ իր գիրն ու գրականությունը, իր գեղարվեստը բոլոր ճյուղերով, նաև մշակել է որոշ գիտություններ: Եվ իր այդ ստեղծագործած կուլտուրական արժեքներով է, որ օտարներից ճանաչվում և նոցանից հարգանք ու պատիվ է վայելում: Այդ մշակույթի շնորհիվ է, որ ազգային ինքնագիտակցություն է ձևաք բերել և որի շնորհիվ էլ ապրել, ապրում և պիտի ապրի այսուհետև:

14-րդ դարու վերջերից, երբ Կիլիկիայում վերջնականապես ջնջվում է հայ քաղաքա-

կան իշխանությունը, հետզհետե թուլանում է մեր կուլտուրական աշխատանքը, նամանավանդ 17-րդ և 18-րդ դարերում՝ տաճկական և պարսկական վայրագ արշավանքների նոցա կատարած ավերումների, հրդեհումների, թալանի, կոտորածների, որոնց հետևանք նաև արտագաղթի պատճառով: Եվ միայն 19-րդ դարի սկզբներին վերստին սկսում է Հայաստանում զարթոնքի շրջանը, երբ Հայաստանի արևելյան մասը անցնում է ռուսաց տիրապետության: Բայց նա արագ քայլերով զարգանում, ծաղկում ու անճանաչելի է դառնում միայն Խորհրդային Իշխանության օրով, շնորհիվ Խորհրդային Հայաստանի հայրենի Պետության հոգատար ջանքերի, հայ ժողովրդի անդուլ ու տոկուն աշխատանքի, ուս մեծ ժողովրդի և դրացի ժողովուրդների բարյացակամ համագործակցության և ռուսական կուլտուրայի բարերար ազդեցության:

Ռուս խոշոր գիտնականների, համաճարեղ գրողների, համաշխարհային մասշտաբով մեծ գեղարվեստագետների ազդեցության շնորհիվ է, որ այսօր մեր երկրում ծաղկել է գիտությունը, գրականությունը և գեղարվեստը իր բոլոր ճյուղերով, և մենք ունինք գիտություն, գեղարվեստի և տեխնիկայի ասպարեզներում այնպիսի խոշոր դեմքեր, որոնք պատիվ են բերում ո՛չ միայն մեզ, հայրենիս, այլ նաև առաջնակարգ ըարձր կուլտուրա ունեցող Խորհրդային Միության: Այսպես և մեր քարակույտներով և ավազուտ անապատներով ծածկված երկիրը երբեմնի հետամնաց գյուղատնտեսական մշակույթամբ, ռուսական կուլտուրայի և համամիովենական ժողովուրդների համագործակցության շնորհիվ դարձել է արդյունաբերական երկիր և զարգացել, ծաղկել ու զորացել է:

Հայ ժողովուրդը խորապես գիտակցում է այն բոլորը, ուստի և լցված է հանդիս Խորհրդային Միության և ռուս մեծ ժողովրդի երախտագիտության զգացմունքով, որ հավիտյան անջինջ կամա նորա հիշողության մեջ: Հայ ժողովուրդը իր երախտագիտությունը արտահայտում է ո՛չ միայն խոսքով, այլև գործով, որի ապացույցը տվավ նա Հայրենական պատերազմի ժամանակ, երբ Միովենական մյուս ժողովուրդների

հետ ազգովին նվիրվեցավ պատերազմի հաղթական ելքի հաջողությանը:

Խորհրդային ժողովուրդների առաջ դրված է այսօր մի նոր խնդիր, որի լուծմամբ սկիզբ կառնեն պատմության մեջ մի նոր դարաշրջան, որի հեղինակն ու հետապնդողն է Խորհրդային Միության ղեկավար և մարդկության մեծ բարեկամ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ, Ցարական իշխանության օրով պետական ներքին քաղաքականության հիմունքներն էին ուժը, բռնությունը և ժողովուրդներին միմյանց հանդեպ հրահրված թշնամական հարաբերությունը: Խորհրդային Միությունը փոխեց այդ քաղաքականությունը և ուժի, բռնության և թշնամական հարաբերության փոխարեն դրավ նորը՝ խաղաղության, եղբայրության և համագործակցության սկզբունքները: Այս քաղաքականության դրական արդյունքն է Խորհրդային Միության մեջ իշխող համերաշխության ոգին և Խորհրդային Միության ձեռք բերած բարձր կուլտուրան ու տեխնիկան: Աշխարհի բոլոր առաջավոր մարդիկ ձգտում են խաղաղության, որովհետև մարդկային կուլտուրայի զարգացման և մարդկության բարեկեցիկ

փնտալի ատեղծման հիմքը աշխարհում տիրող խաղաղությունն է և պետությունների համերաշխությունն ու համագործակցությունը:

Մենք հավատում ենք, որ մարդկային խնչական միտքը և հետզհետե դարձնող խիղճը կհաշտվին աշխարհում խաղաղության և եղբայրության ու համագործակցության զարգացման և արապետության, սկիզբ կառնեն պատմության նոր դարաշրջան և կատեղծվի նոր աշխարհ, նոր ուժի, բռնության և անհատական շահերի փոխարեն կիշխեն խաղաղությունը, եղբայրությունը, ու համագործակցությունը՝ ի բարօրություն մարդկության:

Այս խնդրի լուծման մեջ գիտության ներկայացուցիչները մեծ դեր ունիք կատարելու, ուստի կրկին ողջունելով Ձեր գալուստը մեր Հայրենիքը, բարեմաղթում եմ Ձեր գործունեության և մեծ ձեռնարկներին՝ հաջողություն»:

Հյուրերի կողմից շնորհակալական խոսք ասաց ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին:

Հյուրերին ծաղկյա դահլիճում տրվեց հյուրասիրություն:

